

Ի Թվին և Հայոց մեծին.  
Ձր Թիւ աւելին,  
Յորժամ զսա կտրց.....

.....  
ՂկսուԹենն ար Մուլսիսին.  
Աթուուապուհ սր Գրիգորին.  
Եւ բարեպաշ.....որջորջին.  
Յինէն նորոգ բանս այս լիցին,  
Պասաճառ բնաւի.....

.....լուկ անուամբ երէց կոչիմ»:

Ծանոթ. Ինչպես տեսնում ենք, պանդակատունը կառուցվել է Հայոց ՌՁԲ(1633)Թվականին, Մովսես Խոսրովանցի կաթողիկոսի մահվանից առաջ: Այժմ վերանորոգված է ուկրաինացի ճարարապետ Ա. Դ. Տյուպիչի նախագծով:

Հրատ. Բժշկյան, 138-139:

596. Ս. Նիկողայոսի մոտ եղած տապանաքարերից մեկի վրա եղել է հետևյալ արձանագրությունը.

ԹՎ. ՉՂԲ (1343). Վախճանեցաւ եւ Թաղեցաւ պան Յակոբը՝ Ամիրջանի որդին<sup>228</sup>:

## ԺՎԱՆԵՑ

Դնեստր գետի ափին Հիմնադրված այս գեղաանսիլ փոքրիկ քաղաքը վարչատարածքային ընթացքում 24-ամ հեռավորությամբ գետի հարավ-արևմուտք: Հայերն այստեղ եկել են Մուզովայից և Վալաքիայից, XVII դարի 70-ական թվականներին<sup>229</sup>: Գաղութի ծաղկման ժամանակ եղել են 100 տուն Հայեր<sup>230</sup>. նախապես ունեցել են փայտաշեն եկեղեցի, որի փոխարեն հոգևոր Հովիվ Գրիգոր Գանկևիչի նախաձեռնությամբ կառուցում են ս. Գրիգոր անունով քարաշեն աանար<sup>231</sup>: Օծումը անդի է ունեցել 1791 թ. նորոգումից հետո<sup>232</sup>: Ճարարապետական հորինվածքով ս. Գրիգորը կրել է եվրոպական վերածնության կնիքը: Մ. Բժշկյանի օրոք (1820-ական թթ.) Ժվանեցի Հայկական եկեղեցին անցել էր լեհերին, և Հայ Համայնքն արգեն ենթարկվել էր ուծացման<sup>233</sup>:

Այսպես են թաղված Ժվանեցի շատ Հայորգիներ, ընդ որում նաև Գրիգոր Գանկևիչը<sup>234</sup>:

228 Ա. Սուրենյանց, Ճանապարհորդութիւն դեպի Խերսոնի մահամզ, Բեսարաբիա և Պոդոլիե. «Մասեաց աղավնի եւ ծիւծիւմ Հայաստանեայց». Թեոդոսիա, 1863, օգոստոս 1, էջ 246:

229 В.Р.Григорян, История..., 138-139.

230 Մ. Բժշկյան, էջ 131-132:

231 В.Р.Григорян, История..., с. 139.

232 Մ. Բժշկյան, էջ 132-133, 134:

233 В.Р.Григорян, История..., с. 114.

234 Там же, с. 139.

Մեղ չհասած տապանադրերում հիշառակվող անդանուններից կարելի է կռահել, որ Ժվանեցի հայրության ղգալի մասը ծագումով եղել է բուն Հայաստանից. այսպես թաղված են հրգրումցիներ, ըստեցիներ, Մասրեվանից գաղթածներ, պատմական Հայաստանի այլեայլ գավառներից եկածներ:

Հայկական վիճագրություններ Ժվանեցում չեն պահպանվել. ոչնչացել է հայոց եկեղեցու շուրջ եղած գերեզմանոցը: Մեղ է հասել մի բեկոր, որի լուսանկարը սաացել ենք կիևցի ճարարաբետ Ե. Մ. Պլամինեցկայայից: Դա խաչքարի վրա եղած պակասավոր գրություն է, ընդամենը 3 տող.

597.

ԱՊՆԾ  
ՀԱՅՈՒ  
ԵԿՏԵՄ

...Ա.Ռ. ԱԾ/...ՀԱՅՈՒՅ.../ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ]...

#### Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

598. Պետրոս Առաքյալի նկարի վրա՝

Սուրբ Պետրոս Առաքյալ. յիշատակ է Արզրումցի Մահտեսի Սարգսի որդի ծառու Սահակին:

Հրատ. Кучук-Иоаннесов, 49.

#### ՄՈԳԻԼ ԵՎ ՊՈԴՈԼՍԿ

(ՆԱԽԿԻՆ՝ ՄՈՅՈՎ, ՄԵՅԼՈՎ)

Գտնվում է Վիննիցայի մարզում՝ Դնեսար գետի ձախ ափին: Հայերն այսպես մշակական ընակություն են հաստատել XVIII դարի առաջին ասանամյակներից, թեև մինչ այդ էլ նրանք այս քաղաքում հաճախ եղել են առևարական նստակներով: Ունեցել են ներքին ինքնավարություն: Գրավոր աղբյուրների վկայությամբ՝ Մոգիլե-Պոդոլսկի 12000 ընակիչների մոտավորապես կեսը եղել են հայեր, որոնք ղրաղեցրել են քաղաքի կենտրոնական հատվածը՝ շուկայի մոտ: 1729 թ.<sup>235</sup> (ըստ Սադոկ Բարոնչի՝ 1742-1743 թթ.)<sup>236</sup> կառուցել են Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որի նպաստավորողներն ու հովանավորները եղել են Պոտոցկի իշխանները<sup>237</sup>: Շինարարական աշխատանքները ղլխավորել է Շիմոն Քմիշտոֆովիչ եպիսկոպոսը: 1772 թ. մայիսի 21-ին հիմք է գրվում նոր՝ ս. Ասավածածին եկեղեցուն, որի կառուցումն ավարավում է 1791 թ.<sup>238</sup> Մ. Բժշկյանի

- 235 Տե՛ս Հ. Ջավրյան. Լեռնախաղոց գաղթը և ներքին կյանքը... «Հայրենիք», Բոստոն, 1929, մարտ, էջ 83:  
236 Sadok Barącz, Rys dziejo.w ormianskick, Tarnopol, 1869, s. 156-157.  
237 В. П. Григорян, История, с.164.  
238 Там же. с. 165.)